ԱՁ Հայկ Բարեղամյանի սնանկության գործով գույքի աճուրդ-վաճառքի մասին

2026-11-25 09:11:04

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

25.12.2026թ. ժամը 12:15-ին ք.Երևան, Արշակունյաց 5, 109 դահլիճ հասցեում կկայանա ԱՁ Հայկ Բարեղամյանի ՍնԴ/0617/04/22 սնանկության գործով գույքի աճուրդ-վաճառք, բաց դասական եղանակով, 1 առանձին լոտով:
Լոտ 1 - Հայկ Բարեղամյանի վարկային պարտավորությունների կատարման ապահովման համար «Արեգակ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի /«ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի/ օգտին գրավադրված Հայկ Բարեղամյանին սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզ, գ.Սարդարապատ, 2 փող. 62տ հասցեի անշարժ գույք, մակերսը 194,8 ք/մ, ընդհանուր վիճակը բավարար, ունի վերանորոգման կարիք, մեկնարկային գինը 7,459,000 ՀՀ դրամ: Գույքը ծանրաբեռնված է բնակիչներով:
Գույքի սեփականության փոխանցման, պետական գրանցման և հնարավոր վտարման հետ կապված ծախսերը կատարում է գնորդը:
Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝
ա/ֆիզիկական անձի դեպքում՝անձնագրի պատճեն, իրավաբանական անձանց և անհատ ձեռներեցների դեպքում՝պետական գրանցումը հաստատող փաստաթղթերը:
բ/աճուրդի մասնակցության և կանխավճարի վճարումը հաստատող փաստաթղթերը:
Մասնակցության վճարը կազմում է մեկնարկային գնի 1 տոկոսը, բայց ոչ ավել, քան նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը, իսկ կանխավճարը մեկնարկային գնի 5 տոկոսը: Մասնակցության վճարը և կանխավճարը վճարվում են փոխանցումով «Այ Դի Բանկ» ՓԲԸ-ի Դավիթաշեն մասնաճյուղ ԱՁ Հայկ Բարեղամյանի սնանկության հատուկ հաշվին՝11811029587000
Աճուրդի մասնակից չհամարվող անձիք աճուրդին կարող են մասնակցել ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:
Աճուրդին մասնակցել ցանկացողները 16.12.2026թ.-ից մինչև 20.12.2026թ. ներառյալ կարող են աճուրդի մասնակցության հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան՝ ք.Երևան, Օտյան 53/2 հասցեով:

Աճուրդը անց է կացվում ՀՀ արդարադատության նախարարի 16.02.2020թ. թիվ 116 –Ն հրամանի կարգով:
Աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:
Լոտի վաճառքից հետո հաղթողը և կազմակերպիչը ստորագրում են սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը և տվյալ լոտի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված:
Աճուրդում հաղթող մասնակիցը պարտավորվում է աճուրդի արձանագրությունը ստորագրելուց հետո 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել գույքի արժեքը:
Հաղթող մասնակցի կողմից աճուրդի արձանագրությունը չստորագրելու կամ 10 օրվա ընթացքում ամբողջությամբ գույքի արժեքը չվճարելու դեպքում որպես կանխավճար մուծված գումարը չի վերադարձվում:
Եթե համապատասխան հայտ ներկայացրած անձը աճուրդին չի մասնակցում կամ մասնակցում է, սակայն չի հաղթում, ապա նրա կողմի վճարված նախավճարը ենթակա է վերադարձման, իսկ աճուրդի մասնակցության վճարը վերադարձման ենթակա չէ:
Աճուրդի մասնակցության վճարը անկախ աճուրդի արդյունքներից հայտ ներկայացրած մասնակիցներին վերադարձման ենթակա չէ:
Վաճառվող գույքի մասին մանրամասն տեղեկություններ ստանալու և աճուրդի կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել ԱՁ Հայկ Բարեղամյանի սնանկության գործով կառավարիչ Սամսոն Ղուկասյանին, 091 955 881 հեռախոսահամարով

37493955881

samson6122@mail.ru

-ՀՀ ք. Երևան, Դավիթաշեն 3-րդ թաղ. 94/1